ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԱՋԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության հիմնադիրների ընդհանուր ժողովում

07/07/2016թ. Թիվ 1 որոշմամբ

Ժողովի նախագահ՝

Լիլիթ Գարրոյան

Lilit Gharajyan

Подписано цифровой подписью: Lilit Gharajyan
Дата: 2016.08.15 11:37:42 +04'00'

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2016.08.22 18:30:28 GMT+04:00
Reason: Գրանցված է 02.08.2016թ.

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԱՋԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Կանոնադրությունը հանդիսանում է «ԱՌԱՋԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ունեվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Վարկային Կազմակերպություն») հիմնադիր փաստաթուղթը, որի դրույթները պարտադիր են Վարկային Կազմակերպության բաժնետերերի և կառավարման մարմինների համար: Իր գործունեության իրականացման ընթացքում Վարկային կազմակերպությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ «Օրենսգիրք»), «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ «Օրենք»), վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքներով, այլ իրավական ակտերով (բոլորը միասին՝ «ՀՀ օրենսդրություն») և սույն Կանոնադրությամբ: Վարկային Կազմակերպությունը համարվում է ստեղծված և սկսում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») գրանցվելուց և վերջինիս կողմից լիցենզավորվելուց հետո:

1.2. Վարկային Կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակով հիմնադրված իրավաբանական անձ առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Վարկային Կազմակերպության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով հասարակ անվանական և հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերի:

1.3. Վարկային Կազմակերպության բաժնետիրոջ և Վարկային կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ:

1.4. Վարկային Կազմակերպությունը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Վարկային Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է ունենալ հայերեն և ռուսերեն լեզուներով իր անվանումը պարունակող կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ և Օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային և առևտրային նշաններ, իրավաբական անձի համար անհրաժեշտ այլ վավերապայմաններ:

1.6. Վարկային Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան 69 շենք:

1.7. Վարկային Կազմակերպության պաշտոնական ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ «ԱՌԱՋԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն.

անգլերեն՝ FIRST FACTORING COMPANY universal credit organization closed joint stock company.
ռուսերեն՝ «ПЕРВАЯ ФАКТОРИНГОВАЯ КОМПАНИЯ» универсальная кредитная организация закрытое акционерное общество.

Վարկային Կազմակերպության անվանման կրճատ տարբերակն է.
հայերեն՝ «ԱՌԱՋԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՎԿ ՓԲԸ.
անգլերեն՝ FIRST FACTORING COMPANY UCO CJSC.
ռուսերեն՝ «ПЕРВАЯ ФАКТОРИНГОВАЯ КОМПАНИЯ» УКО ЗАО.

2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Վարկային Կազմակերպության ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը: Մասնավորապես, Վարկային Կազմակերպությունը կարող է.

ա) ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ հրապարակային օֆերտաների միջոցով միջոցների ներգրավման,
բ) տրամադրել վարկեր, փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ հրապարակային օֆերտաների միջոցով այդպիսի գործարքների կնքման,
գ) իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքի ֆինանսավորում, ֆակտորինգ,
դ) տրամադրել երաշխիքներ,
ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,
զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորային) կառավարում,
է) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,
ը) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
ը) իրականացնել ֆինանսկաան վարձակալություն (լիզինգ),
թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,
ժ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,
ի) հանդես գալ որպես ապահովագրական գործակալ,

ժա) ՀՀ ԿԲ համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:

2.2. Վարկային կազմակերպությունը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք (պայմանագիր), որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար: Վարկային Կազմակերպությունը կարող է կնքել այնպիսի գործարքներ, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում Վարկային Կազմակերպության համար, սակայն կապված չեն Վարկային Կազմակերպության կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հետ: Վարկային Կազմակերպությունը չի կարող իրականացնել արտարդական, առևտրային և(կամ) լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:

2.3. Վարկային Կազմակերպությունը «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

2.4. Վարկային կազմակերպությունը կարող է փոխառություններ ներգրավել և(կամ) նմանատիպ գործարքներ կնքել իրավաբանական անձանց, իր մասնակիցների, անհատ ձեռնարկատերերի, Հայաստանի Հանրապետության և համայնքների, այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջներին համապատասխան:

2.5. Վարկային կազմակերպությունը հրապարակային առաջարկի միջոցով ծառայություններ չի մատուցում ֆիզիկական անձանց:

2.6. Վարկային կազմակերպությունը հրապարակային օֆերտաների միջոցով չի ներգրավում փոխառություններ:

3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Վարկային Կազմակերպությունն ունի սույն Կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականություններ: Վարկային Կազմակերպությունն իրեն պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում է իր հայեցողությամբ: Վարկային Կազմակերպության կողմից իր այդ իրավունքների իրականացումից հրաժարվելը չի հանգեցնում այդ իրավունքների դադարման, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

3.2. Վարկային Կազմակերպությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր և կախյալ) հիմնադիր, եթե դա արգելված չէ օրենսդրությամբ:

3.3. Վարկային կազմակերպությունը կրում է օրենդրությամբ վարկային կազմակերպությանը վերապահված իրավունքներ ու պարտականություններ՝ անկախ դրանք սույն Կանոնադրությամբ նախատեսված լինելու հանգամանքից, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

3.4. Վարկային Կազմակերպությունն իրավունք ունի՝

3.4.1. ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

3.4.2. ստեղծել օրենսդրությամբ թույլատրված առաձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս:

3.4.3. իր հայեցողությամբ և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան սահմանել իր կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների և մատուցվող ծառայությունների տոկոսադրույքերը, միջնորդավճարները և վարկ տրամադրելու առնչությամբ մատուցված այլ ծառայությունների դիմաց գանձվող վճարները,

3.4.4. Վարկային Կազմակերպության նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով իրացնել և վաճառել գրավատուի կողմից գրվադրված գույքը,

3.4.5. Հայաստանի Հանրապետության այլ վարկային և ֆինանսական կազնակերպությունների, իրավաբանական անձանց և քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց հետ ստեղծել միավորումներ և այլ միություններ,

3.4.6. գնել, վարձակալել, ստանալ, ներդնել, որևէ օրինական եղանակով վերցնել կամ այլ կերպ ձեռք բերել, տիրապետել տնօրինել, բարելավել, օգտագործել և այլ գործողությունների ենթարկել անշարժ և շարժական գույք, ինպես նաև վերջիններիս հետ կապված ցանկացած իրավունք, ինչպես նաև վաճառել, փոխանցել, վարձակալել, փոխանակել կամ այլ կերպ օտարել, գրավադրել կամ ծանրաբեռնել իր գույքը և ակտիվները կամ դրանց ցանկացած մաս, կամ դրանց հետ կապված ցանկացած իրավունք,

3.4.7. ներմուծել և արտահանել իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ,

3.4.8. բացել, ունենալ և օգտագործել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետությունում՝ ՀՀ օրենսդրության համաձայն, ինչպես նաև այլ երկրներում, դրամով և(կամ) արտարժույթով,

3.4.9. Հայաստան Հանրապետության տարածքում և դրանից դուրս դատարաններում և արբիտրաժային մարմիններում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող, դատավարության շրջանակներում հետամուտ լինել դատավճիռների կայացմանը և ճանաչմանը, ի կատար ածմանը և հարկադիր կատարմանը, ինչպես նաև վեճերի խաղաղ լուծման վերաբերյալ հաշտություն կնքել,

3.4.10. Աշխատանքի ընդունել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա ֆիզիկական անձանց և որոշել նրանց աշխատանքային պարտականությունների շրջանակը և վարձատրության չափը,

3.4.11. օրենսդրությամբ սահմանված կարգով վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել իրավաբանական անձանց համար, օգտվել նրանց, ինչպես նաև քաղաքացիների կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում, վերջիններիս օրենդրությանը համապատասխան, իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք կամ լինել դրանց մասնակից, օգտվել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.4.12. Օրենքով սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,

3.4.13. իրականացնել ցանկացած այլ գործունեություն, որը կապված է Վարկային Կազմակերպության նպատակների հետ և ուղղակիորեն արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ:

3.5. Վարկային Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.6. Վարկային Կազմակերպությունը պարտավոր է.

3.6.1. օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական և այլ հաշվետվություններ,

3.6.2. ապահովել Վարկային Կազմակերպության փաստաթղթերի և Օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերի սահմանված կարգով պահպանումը,

3.6.3. կրել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Վարկային Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

4.2. Վարկային Կազմակերպությունը պատասխանատու չէ իր բաժնետիրոջ պարտավորությունների համար:

4.3. Վարկային Կազմակերպության բաժնետերը պատասխանատվություն չի կրում Վարկային Կազմակերպության պարտավորությունների համար և իրեն պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում է Վարկային Կազմակերպության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

4.4. Եթե Վարկային Կազմակերպության անվճարունակության (սնանկացման) պատճառ են հանդիսացել բաժնետիրոջ կամ այլ անձանց գործողությունները, (անգործությունը), որոնք ունեն Վարկային Կազմակերպության պարտադիր

կատարման համար ցուցումներ տալու կամ այլ կերպ Վարկային Կազմակերպության գործունեությունը կանխորոշելու իրավունք, ապա նշված բաժնետերը կամ այլ անձինք կրում են լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն Վարկային Կազմակերպության պարտավորությունների համար:

4.5. ՀՀ ԿԲ-ն և Վարկային Կազմակերպությունը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

4.6. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և Վարկային Կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում միմյանց պարտավորությունների համար:

5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Վարկային Կազմակերպության գույքը պատկանում է Վարկային Կազմակերպությանը տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ուժով:

5.2. Վարկային Կազմակերպության սեփականության իրավունքի օբյեկտներն են՝

5.2.1. բաժնետոմսերի դիմաց վճարման տեսքով բաժնետերերի ներդրած բոլոր միջոցները,

5.2.2. Վարկային Կազմակերպության գործունեությունից ստացված եկամուտները.

5.2.3. չբաշխված շահույթը,

5.2.4. օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված գույքը, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ գույքը:

5.3. Վարկային Կազմակերպությունը կարող է որպես սեփականություն ունենալ ցանկացած գույք, բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենսդրության համապատասխան չեն կարող պատկանել Վարկային Կազմակերպությանը:

5.4. Վարկային Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Վարկային Կազմակերպության պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են Օրենքով;

5.5. Վարկային Կազմակերպությունը կարող է ունենալ օրենսդրությամբ նախատեսված գույքային և ոչ գույքային իրավունքներ:

5.6. Վարկային Կազմակերպության գույքի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

6. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԸ

6.1.Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալը սահմանում է Վարկային Կազմակերպության պարտատերերի շահերը երաշխավորող Վարկային

Կազմակերպության գույքի նվազագույն չափը: Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել ՀՀ ԿԲ կողմից սահմանված չափից:

6.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 240.000.000 (երկու հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 195.918.367 (հարյուր իննսուն հինգ միլիոն ինը հարյուր տասնութ հազար երեք հարյուր վաթսունյոթ) հատ սովորական անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 1 (մեկ) ՀՀ դրամ անվանական արժեքով և 44.081.633 (քառասունչորս միլիոն ութսունմեկ հազար վեց հարյուր երեսուներեք) հատ հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 1 (մեկ) ՀՀ դրամ անվանական արժեքով:

6.3. Բոլոր 195.918.367 (հարյուր իննսուն հինգ միլիոն ինը հարյուր տասնութ հազար երեք հարյուր վաթսունյոթ) հատ սովորական անվանական բաժնետոմսերը և 44.081.633 (քառասունչորս միլիոն ութսունմեկ հազար վեց հարյուր երեսուներեք) հատ հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

6.4. Ընկերության հայտարարագրված արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 44.081.633 (քառասունչորս միլիոն ութսունմեկ հազար վեց հարյուր երեսուներեք) հատ բաժնետոմս: Արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը 1 (մեկ) ՀՀ դրամ է: Ընկերության հայտարարագրված արտոնյալ բաժնետոմսերը հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսեր են, որոնց ընդհանուր անվանական արժեքը կազմում է 44.081.633 (քառասունչորս միլիոն ութսունմեկ հազար վեց հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ: Ընկերության կողմից տեղաբաշխված հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերն իրավունք են տալիս դրանց սեփականատերերին ստանալ հաստատագրված շահութաբաժին, որի տարեկան չափը կազմում է 1 (մեկ) ՀՀ լումա մեկ արտոնյալ բաժնետոմսի դիմաց: Այն ենթակա է վճարման Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովից 6 ամսվա ընթացքում՝ սկսած տեղաբաշխման տարվան հաջորդող տարվանից: Հաստատագրված շահութաբաժինները կումուլյատիվ շահութաբաժիններ են: Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ կամ մասնակի չվճարված շահութաբաժինը կուտակվում և վճարվում է հետագայում: Ընկերության կողմից տեղաբաշխված հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը հավասար է այդպիսի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման գնին հանած արտոնյալ բաժնետոմսերի դիմաց ստացած շահութաբաժինները: Այն դեպքում, երբ լուծարային արժեքը բացասական մեծություն է արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը Ընկերությանը որևէ գումար վերադարձնելու պարտավորություն չի ունենա:

6.5. Արգելվում է բաժնետոմսերը վճարելու պարտականությունից Վարկային Կազմակերպության բաժնետիրոջն ազատել, այդ թվում՝ Վարկային Կազմակերպության նկատմամբ պահանջների հաշվանցով:

6.6.Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7.Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:
6.8.Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալի մեծացման մասին որոշումն ուժի մեջ է մտնում այդ փոփոխությունը ՀՀ ԿԲ կողմից գրանցելու պահից:
6.9.Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալում բաժնետիրոջ կողմից լրացուցիչ ներդրումներ կատարելիս բաժնետերը սահմանված կարգով պարտավոր է դիմել ռեեստրավարին՝ Վարկային Կազմակերպության բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրանցումներ կատարելու համար՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը:
6.10. Վարկային Կազմակերպության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է ավելի փոքր մեծություն, ապա հատկացումները պահուստային հիմնադրամին կատարվում են շահույթից՝ 5%-ի չափով, ինչպես նաև Վարկային Կազմակերպության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Վարկային Կազմակերպության կորուստները ծածկելու, ինչպես նաև պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Վարկային կազմակերպության շահույթը և այլ միոցները դրա համար չեն բավարարում:

7. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

7.1.Վարկային Կազմակերպությունը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր և այլ արժեթղթեր:
7.2.Վարկային Կազմակերպության բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրությամբ, դրանց անվանական արժեքով կամ Օրենքով սահմանված կարգով որոշվող շուկայական արժեքով:
7.3.Բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են բացառապես ՀՀ դրամով, բացառությամբ Վարկային Կազմակերպության վերակազմակերպման դեպքի, երբ կանոնադրական կապիտալի վճարումը և ավելացումը կարող են կատարվել բաժնետոմսերի փոխարկման միջոցով:
7.4. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Վարկային Կազմակերպությունն իրավունք ունի տեղաբաշխել լրացուցիչ բաժնետոմսեր:
7.5.Վարկային Կազմակերպության տեղաբաշխվող բաժնետոմսերի ձևը ոչ փաստաթղթային է:

7.6.Վարկային կազմակերպության բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:
7.7.Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Վարկային Կազմակերպությունն իրավունք ունի համախմբել (կոնսոլիդացնել) իր տեղաբաշխած բաժնետոմսերը՝ ավելացնելով դրանց անվանական արժեքը, կամ դրանք բաժանել ավելի փոքր անվանական արժեքով բաժնետոմսերի: Համախմբման (կոնսոլիդացման) հետևանքով կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում վերջիններս ենթակա են հետգնման Վարկային Կազմակերպության կողմից՝ Օրենքով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով:
7.8.Վարկային Կազմակերպության բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականտեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:
7.9.Վարկային Կազմակերպության բաժնետոմսերի նկատմամբ նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագում, իսկ նախկին սեփականատիրոջ իրավունքը դադարում է բաժնետերերի սեփականատերերի ռեեստրում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո:
7.10. Վարկային Կազմակերպության կողմից թողարկված հասարակ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է պակաս լինի Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալի քսանհինգ տոկոսից:
7.11. Վարկային Կազմակերպության կողմից թողարկված հասարակ բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Վարկային Կազմակերպության բաժնետերեր են համարվում Օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով Վարկային Կազմակերպության բաժնետոմսեր ձեռք բերած քաղաքացիները և իրավաբանական անձինք:
8.2. Վարկային Կազմակերպության բաժնետերերի թիվը չպետք է գերազանցի 49-ը: Բաժնետերերի թիվը 49-ից ավելի դառնալու դեպքում, Վարկային Կազմակերպությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ համապատասխանաբար կրճատի իր բաժնետերերի քանակը: Հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման դատական կարգով:
8.3. Վարկային Կազմակերպության յուրաքանչյուր հասարակ բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:
8.4. Վարկային Կազմակերպության հասարակ բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրավունք ունեն՝

8.4.1. մասնակցել Վարկային Կազմակերպության ընդհանուր ժողովին, վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
8.4.2. Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
8.4.3. ստանալ Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման մասին գրավոր ծանուցում և այդ ժողովների համար առաջարկվող օրակարգը,
8.4.4. մասնակցել Վարկային Կազմակերպության գործերի կառավարմանը,

8.4.5. մասնակցել Վարկային Կազմակերպության շահույթի բաշխմանը և ստանալ շահութաբաժիններ Վարկային Կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից,
8.4.6. առաջնահերթության կարգով ձեռք բերել Վարկային Կազմակերպության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,
8.4.7. իրականացնել Վարկային կազմակերպության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքը բաժնետոմսերի վաճառքի վերաբերյալ առաջարկն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում,
8.4.8. ստանալ Վարկային Կազմակերպության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ գաղտնի փաստաթղթերից, ինչպես նաև վերջինիս՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, ծանոթանալ վերստուգողի և արտաքին աուդիտորի հաշվետվություններին, հաշվապահական հաշվառման տեղեկություններին և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի,
8.4.9. հանդես գալ առաջարկություններով Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովում,
8.4.10. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
8.4.11. դիմել դատարան՝ Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
8.4.12. Վարկային Կազմակերպության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը,
8.4.13. ընտրել Վարկային Կազմակերպության ընտրովի մարմինների անդամների և ընտրվել որպես այդ մարմինների անդամ:

8.5. Վարկային Կազմակերպության հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերն իրենց սեփականատեր բաժնետերերին տրամադրում են միևնույն իրավունքները:

8.6. Վարկային Կազմակերպության հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում ունեն ձայնի իրավունք, եթե քննարկվում են Վարկային Կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման հարցեր:
8.7. Հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում ձեռք են բերում ձայնի իրավունք, եթե քննարկվում են կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը:
8.8. Հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ձայնի իրավունքով մասնակցել այն բաժնետերերի ընդհանուր ժողովում բոլոր հարցերի քննարկմանը, որը հետևում է տարեկան այն բաժնետերերի ընդհանուր ժողովին, որում չի ընդունվել որոշում՝ այդ դասի արտոնյալ կումուլյատիվ բաժնետոմսերի դիմաց բոլոր կուտակված շահութաբաժինները վճարելու մասին, կամ ընդունվել է որոշում՝ դրանք չվճարելու կամ ոչ լրիվ ծավալով վճարելու մասին: Այդ իրավունքը դադարում է արտոնյալ կումուլյատիվ բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով բոլոր կուտակված շահութաբաժինների վճարումից հետո:
8.9. Վարկային Կազմակերպության հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը օգտվում են սույն Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքներից:
8.10. Վարկային Կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի առնվազն հինգ տոկոսի սեփականատեր բաժնետերերը կարող են պահանջել Վարկային Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում աուդիտորի կողմից: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում է ստուգում պահանջող բաժնետերը:
8.11. Վարկային Կազմակերպության բաժնետերերը կարող են ունենալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:
8.12. Հասարակ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Վարկային Կազմակերպության կողմից չեն երաշխավորվում:
8.13. Վարկային Կազմակերպության բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերը կարող է բաժնետոմսերն օտարել՝ միայն Օրենքով և սույն Կանոնարությամբ սահմանված կարգով այդ մասին նախապես ծանուցելով մյուս բաժնետերերին:

8.14. Եթե սույն Կանոնադրությամբ նախատեսված ժամկետում Վարկային կազմակերպության բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում սույն Կանոնադրության 8.4.7 ենթակետով նախատեսված նախապատվության իր իրավունքից, ապա Վարկային Կազմակերպությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել

սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Վարկային Կազմակերպության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Վարկային Կազմակերպության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանից հրաժարվելու մասին որոշումը կայացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:

8.15. Վարկային Կազմակերպության բաժնետերերը պարտավոր են.

8.10.1. կատարել սույն Կանոնադրության և բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների պահանջները,

8.10.2. կատարել Վարկային Կազմակերպությունում իր մասնակցության հետ կապված իր պարտավորությունները, այդ թվում, բայց ոչ միայն, վճարել բաժնետոմսերի արժեքը,

8.10.3. կատարել Վարկային Կազմակերպության հետ կնքված բոլոր առանձին պայմանագրերով նախատեսված պարտավորությունները՝ այդ պայմանագրերի դրույթներին և պայմաններին համապատասխան,

8.10.4. Վարկային Կազմակերպությանը ծանուցել բաժնետոմսերի ցանկացած օտարման կամ գրավադրման կամ հասցեի ցանկացած փոփոխության մասին,

8.10.5. ձեռնպահ մնալ Վարկային Կազմակերպության հաճախորդների և Վարկային Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց:

9. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ

9.1. Վարկային Կազմակերպությունն իրավունք ունի հայտարարել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

9.2. Վարկային Կազմակերպությունը պարտավոր է վճարել բաժնետոմսերի յուրաքանչյուր ձևի և տեսակի համար հայտարարված շահութաբաժիններ՝ ՀՀ դրամով:

9.3. Շահութաբաժինները վճարվում են տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից, որն առաջանում է բոլոր հարկերը վճարելուց և շահույթը ստանալու համար անհրաժեշտ այլ ծախսերը կրելուց հետո, տարեկան և (կամ) միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) շահութաբաժինների վճարման ձևով:

9.4. Միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Վարկային Կազմակերպության խորհրդի կողմից: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

9.5. Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ խորհրդի առաջարկությամբ: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:
9.6. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու մասին:
9.7. Տարեկան շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Վարկային Կազմակերպության խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:
9.8. Տարեկան շահութաբաժինների չափն արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար լինելու դեպքում տարեկան շահութաբաժին չի վճարվում: Ավել լինելու դեպքում վճարվում է տարբերությունը:
9.9. Վարկային Կազմակերպության բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե՝

9.9.1. լրիվ չի վճարվել Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալը,
9.9.2. Վարկային Կազմակերպությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը, որոնց հետգնումը պահանջվել է Օրենքի 58-րդ հոդվածով սահմանված կարգով,
9.9.3. Շահութաբաժիններ վճարելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ Վարկային Կազմակերպության վիճակը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվճարունակության հայտանիշներին, կամ այդ հայտանիշներն ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,
9.9.4. Վարկային կազմակերպության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

10. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

10.1. Վարկային Կազմակերպության կառավարման մարմիններն են՝
10.1.1. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
10.1.2. Վարկային Կազմակերպության տնօրենների խորհուրդը,
10.1.3. Գործադիր տնօրենը:
10.2. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը
10.2.1. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմին է:

10.2.2. Վարկային Կազմակերպությունը պարտավոր ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Վարկային Կազմակերպության առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո: Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է յուրաքանչյուր տարի Վարկային կազմակերպության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

10.2.3. Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

10.2.4. Բաժնետերերի ընդհանուր ժողովում հասարակ բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն ունեն Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալում իրենց կողմից վճարված հասարակ բաժնետոմսերին համամասնական ձայնի իրավունք: Բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Վարկային Կազմակերպության խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

10.2.5. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Վարկային Կազմակերպության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Վարկային կազմակերպության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Եթե Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների առանձին ցուցակ:

10.2.6. Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա. Վարկային Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ. Վարկային Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

գ. Վարկային Կազմակերպության լուծարման մասին որոշման ընդունումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, լուծարային նախագծի հաստատումը, ամփոփիչ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը,

դ. Վարկային Կազմակերպության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ե. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
զ. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
է. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Վարկային Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Վարկային Կազմակերպության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Վարկային Կազմակերպության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
ը. Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
թ. Վարկային Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
ժ. Վարկային Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
ժա. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի սահմանումը,
ժբ. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը (Օրենքով սահմանված դեպքերում),
ժգ. Վարկային Կազմակերպության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութական հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,
ժդ. Բաժնետոմսերի բաժանման կամ համախմբման (կոնսոլիդացիայի) մասին որոշման ընդունումը
ժե. Օրենքով սահմանված դեպքերում Վարկային Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,
ժզ. Օրենքով սահմանված դեպքերում՝ Վարկային Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,

ժէ. Վարկային Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,

ժը. Վարկային Կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի, անդամների, գործադիր տնօրենի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,

ժթ. հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,

ի. հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը,

իա. Օրենքով և սույն Կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

10.2.7. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

10.2.8. Սույն Կանոնադրության 10.2.6. կետի (ա), (բ), (գ), (ե), (ժե) ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս, քան ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ով:

10.2.9. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Վարկային Կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

10.2.10. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները հաղորդվում են բաժնետերերին կապի միջոցներով՝ այդ որոշումներն ընդունելու պահից 10 օրվա ընթացքում:

10.2.11. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամները, վերստուգողը, Վարկային Կազմակերպության խորհրդի՝ բաժնետեր չհանդիսացող անդամները և գործադիր տնօրենը:

10.2.12. Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցվում է ժողովի նշանակման օրվանից առնվազն 10 օր առաջ՝ նամակների և (կամ) ֆաքսի միջոցով: Ընդհանուր ժողովի օրակարգը հաստատվում է խորհրդի կողմից՝ հաշվի առնելով առանձին բաժնետերերի կողմից Օրենքով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունները:

10.2.13. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով կարող է գումարվել անհետաձգելի հարցերի քննարկման համար: Բաժնետերերի արտահերթ

ընդհանուր ժողովները գումարվում են Վարկային Կազմակերպության խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, վերստուգող հանձնաժողովի, Վարկային կազմակերպության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Վարկային Կազմակերպության առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

10.2.14. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը սահմանվում է Վարկային կազմակերպության խորհրդի որոշմամբ, և կախված այդ ձևի ընտրությունից, արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով:

10.2.15. Վարկային Կազմակերպության խորհուրդը պարտավոր է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման կամ արտահերթ ընդհանուր ժողովի գումարումը մերժելու մասին որոշում կայացնի վերստուգող հանձնաժողովի, Վարկային կազմակերպության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Վարկային Կազմակերպության առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից 10 օրվա ընթացքում:

10.2.16. Վարկային Կազմակերպության խորհուրդն իրավունք ունի մերժել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարումը բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

10.2.17. Եթե Վարկային Կազմակերպության խորհուրդը սույն Կանոնադրության 10.2.15 կետում նախատեսված ժամկետում որոշում չի կայացնում բաժնետերերի արտահերթ ժողով գումարելու կամ որոշում է կայացնում արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին, ապա Վարկային Կազմակերպության բաժնետերերի արտահերթ ընդհանուր գումարվում է ժողովի գումարման պահանջ ներկայացրած անձի կողմից՝ որոշում կայացնելով Վարկային Կազմակերպության միջոցների հաշվին փոխհատուցել ժողով գումարելու հետ կապված ծախսերը:

10.2.18. Բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է դրա փակումից հետո հինգ օրվա ընթացքում առնվազն երկու օրինակով, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

10.2.19. Եթե Վարկային Կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր հանդիսանում է մեկ անձ, ապա ժողովի որոշումներն ընդունվում են այդ անձի գրավոր որոշմամբ:

10.3. Վարկային Կազմակերպության խորհուրդը.

10.3.1. Վարկային Կազմակերպության խորհուրդն իրականացնում է Վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն Կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

10.3.2. Խորհրդի նախագահը և անդամների պետք է համապատասխանեն ՀՀ ԿԲ կողմից սահմանված որակավորման ու մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

10.3.3. Վարկային Կազմակերպության խորհուրդը՝

ա. որոշում է Վարկային Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները,

բ. գումարում է Վարկային Կազմակերպության տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովներ, բացառությամբ Օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի,

գ. հաստատում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը,

դ. հաստատում է ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը,

ե. լուծում է Վարկային Կազմակերպության ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված բոլոր հարցերը,

զ. Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ-ժէ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը,

է. Օրենքով սահմանված կարգով տեղաբաշխում է Վարկային Կազմակերպության պարտատոմսերը և այլ արժեթղթերը,

ը. Օրենքով սահմանված կարգով որոշում է Վարկային Կազմակերպության գույքի շուկայական արժեքը,

թ. Վարկային Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,

ժ. նախապատրաստում է առաջարկություններ Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ,

ժա. սահմանում է Վարկային Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,

ժբ. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար նախապատրաստում է առաջարկություններ Վարկային Կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,

ժգ. սահմանում է Վարկային Կազմակերպության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափը և վճարման կարգը,

ժդ. նշանակում է Վարկային Կազմակերպության գործադիր մարմնին (գործադիր տնօրենին), վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները, սահմանում է գործադիր տնօրենի

վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները,

ժե. որոշում է կայացնում Վարկային Կազմակերպության պահուստային հիմնադրամի օգտագործման վերաբերյալ,

ժզ. հաստատում է Վարկային Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը,

ժէ. ընդունում է որոշումներ դուստր և կախյալ ընկերությունների ստեղծման, դրանց կանոնադրական կապիտալում Վարկային Կազմակերպության մասնակցության չափի մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

ժը. ընդունում է որոշումներ Վարկային Կազմակերպության մասնաճյուղերի ներկայացուցչությունների և գործառնական գրասենյակների ստեղծման մասին, հաստատում է դրանց կանոնադրությունները,

ժթ. ընդունում է որոշումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում Վարկային Կազմակերպության մասնակցության մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

ի. կնքում է Վարկային Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ՝ Օրենքով նախատեսված դեպքերում,

իա. կնքում է Վարկային Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված շահագրգռվածության առկայությամբ գործարքներ՝ Օրենքով նախատեսված դեպքերում,

իբ. հաստատում է Վարկային Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

իգ. հաստատում է Վարկային Կազմակերպության ծախսերի ամենամյա նախահաշիվը և դրա կատարողականը,

իդ. հաստատում է Վարկային Կազմակերպության հաստիքացուցակը,

իե. լուծում է Օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ հարցեր:

10.3.4. Վարկային Կազմակերպության խորհրդի անդամներն ընտրվում են Վարկային Կազմակերպության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում:

10.3.5. Վարկային Կազմակերպության խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Վարկային Կազմակերպության խորհրդի ցանկացած անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Այդ դեպքում Վարկային Կազմակերպության խորհրդի նոր անդամն ընտրվում է

Վարկային Կազմակերպության բաժնետերերի արտահերթ ժողովի կողմից՝ Օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:

10.3.6. Վարկային Կազմակերպության այն բաժնետերերը, որոնք Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ տիրապետում են Վարկային Կազմակերպության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Վարկային Կազմակերպության խորհրդի կազմում կամ Վարկային Կազմակերպության խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև Վարկային Կազմակերպության ռեեստրում գրանցված անվանատերերին:

10.3.7. Վարկային Կազմակերպության խորհրդի ընտրություններն իրականացվում են գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ, որի ժամանակ յուրաքանչյուր քվեարկող բաժնետոմս ունի խորհրդի ընտրվող (վերընտրվող) անդամների քանակին հավասար ձայների քանակ: Բաժնետերը քվեարկության ընթացքում իրավունք ունի ձայները տրամադրել մեկ թեկնածուին կամ բաշխել մի քանի թեկնածուների միջև: Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

10.3.8. Վարկային Կազմակերպության խորհրդի քանակական կազմը սահմանվում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք հոգուց պակաս լինել: Սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն Կանոնադրության 10.3.6 կետի համաձայն իրավունք ունեն ընդգրկվել խորհրդի կազմում առանց ընտրության:

10.3.9. Վարկային կազմակերպության խորհրդի անդամ կարող են լինել գործունակ քաղաքացիները: Վարկային Կազմակերպության խորհրդի անդամներ կարող են լինել նաև Վարկային Կազմակերպության բաժնետեր չհանդիսացող հանձինք, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Վարկային Կազմակերպության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող Վարկային Կազմակերպության խորհրդում մեծամասնություն կազմել: Վարկային կազմակերպության խորհրդի անդամների նկատմամբ Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված Վարկային Կազմակերպության խորհրդի կանոնակարգով կարող են նախատեսվել նաև այլ սահմանափակումներ և պահանջներ:

10.3.10. Վարկային Կազմակերպության խորհրդի նախագահին ընտրում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը, խորհրդի անդամների կազմից: Բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ:

10.3.11. Վարկային Կազմակերության խորհրդի նախագահը.

ա. կազմակերպում է Վարկային Կազմակերպության խորհրդի աշխատանքները,

բ. գումարում է Վարկային Կազմակերպության խորհրդի նիստերը և նախագահում դրանք,

գ. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

դ. նախագահում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովներում:

10.3.12. Վարկային Կազմակերպության խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Վարկային Կազմակերպության խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

10.3.13. Վարկային Կազմակերպությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ծանոթացման համար:

10.3.14. Վարկային Կազմակերպության խորհդի նիստերը գումարվում են Վարկային Կազմակերպության խորհրդի նախագահի կողմից իր նախաձեռնությամբ՝ Վարկային Կազմակերպության խորհրդի անդամի, Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Վարկային Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի, Վարկային Կազմակերպության գործադիր տնօրենի պահանջով:

10.3.15. Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով:

10.3.16. Վարկային Կազմակերպության խորհրդի նիստերի քվորումը սահմանվում է Վարկային Կազմակերպության խորհրդի կանոնակարգով, բայց չի կարող Վարկային Կազմակերպության խորհրդի անդամների կեսից պակաս լինել:

10.3.17. Վարկային Կազմակերպության խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով այլ բան սահմանված չէ:

10.3.18. Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Վարկային Կազմակերպության խորհրդի անդամից խորհրդի մյուս անդամին չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում Վարկային Կազմակերպության խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

10.3.19. Վարկային Կազմակերպության խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հնգօրյա ժամկետում: Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստի բոլոր անդամները, որոնք պատասխանատու են արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության համար:

10.4. Վարկային Կազմակերպության գործադիր մարմինը

10.4.1. Վարկային Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Վարկային Կազմակերպության գործադիր տնօրենը: Վարկային Կազմակերպության գործադիր տնօրենը հաշվետվու է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին և խորհրդին:

10.4.2. Վարկային Կազմակերպության գործադիր տնօրենը կազմակերպում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը և իրավունք չունի բաժնետերերի, խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու:

10.4.3. Վարկային Կազմակերպության անունից գործաիր տնօրենի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը: Եթե խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պաշտոնները զբաղեցնում է միևնույն անձը, նրա հետ պայմանագիրը կնքում է խորհրդի անդամներից մեկը՝ խորհրդի որոշմամբ:

10.4.4. Վարկային Կազմակերպության գործադիր տնօրենը՝

ա. տնօրինում է Վարկային Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Վարկային Կամզակերպության անունից,

բ. ներկայացնում է Վարկային Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

գ. տալիս է լիազորագրեր,

դ. գործում է Վարկային Կազմակերպության անունից առանց լիազորագրի,

ե. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

զ. որոշում է կադրերի ընտրության, տեղաբաշխման և վերապատրաստման հարցերը,

է. բանկերում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,

ը. Վարկային Կազմակերպության խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Վարկային Կազմակերպության աշխատանքային կանոնակարգը, տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, Վարկային Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

թ. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժ. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Վարկային Կազմակերպության աշխատակիցներին.

ժա. Վարկային Կազմակերպության աշխատակիցների նկատմամբ անհրաժեշտության դեպքում կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժբ. իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

10.4.5. Վարկային Կազմակերպության գործադիր տնօրենը պարտավոր է գործել բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ Վարկային Կազմակերպության: Նա պարտավոր է Վարկային Կազմակերպության բաժնետերերի պահանջով հատուցել իր կողմից Վարկային Կազմակերպությանը պատճառած վնասները, եթե այլ բան չի նախատեսված Օրենքով կամ Վարկային Կազմակերպության և գործադիր տնօրենի միջև կնքված պայմանագրով:

10.4.6. Վարկային Կազմակերպության գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալ, որի իրավասությունները և պարտականություններն են՝

ա. Գործադիր տնօրենի ընթացիկ հանձնարարությունների և առաջադրանքների կատարումը,

բ. Համապատասխան լիազորությամբ գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարությունը:

10.4.7. Վարկային Կազմակերպության գործադիր տնօրենի բացակայության կամ նրա պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարկային Կազմակերպության այլ՝ օրենքով և այլ իրավական ակտերով թույլատրվող աշխատակիցը:

10.4.8. Վարկային Կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է Վարկային Կազմակերպության՝

- ՀՀ օրենսդրությանը և Վարկային Կազմակերպության ներքին կանոններին համապատասխան, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարումը,
- Վարկային Կազմակերպության ամենօրյա հաշվեկշռի կազմումը,
- Բյուջեի պլանավորումը,
- Վարկային Կազմակերպության կողմից կատարվող գործառնությունների հաշվապահական վերահսկողությունը,
- սահմանված կարգով Վարկային Կազմակերպության կողմից ՀՀ լիազորված մարմիններին, ինպես նաև բաժնետերերին ֆինանսական, հարկային և այլ հաշվետվությունների կազմումը և սահմանված ժամկետներում դրանց ներկայացումը, դրանցում արտացոլվող տվյալների արժանահավատության ապահովումը,
- սահմանված կարգով և ժամկետներում Վարկային Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը,
- Վարկային Կազմակերպության աշխատողների աշխատավարձի հաշվարկը,

- Վարկային Կազմակերպության մասնաճյուղերի և տարածքային այլ ստորաբաժանումների հաշվապահական հաշվառման վարման և գործառնությունների գրանցման վերահսկումը,
- Վարկային Կազմակերպության կառավարման մարմինների հանձնարարականների կատարումը:

10.4.9. Գլխավոր հաշվապահն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրելու իր գործողությունների (անգործության) հետևանքով Վարկային Կազմակերպությանը պատճառած վնասների համար:

11. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

11.1. Վարկային Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրված վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը):

11.2. Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավասությունները սահմանվում են Օրենքով և սույն Կանոնադրությամբ: Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) գործառույթները հստակ սահմանված են ՀՀ գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ, դրանք տարանջատվում են Վարկային Կազմակերպության տնօրենների խորհրդի գործառույթներից՝ Օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ ամրագրված կադրային, ինստիտուցիոնալ, ընթացակարգային և այլ մեխանիզմներով:

11.3. Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է Վարկային Կազմակերպության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Վարկային Կազմակերպության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն Կանոնադրությանը:

11.4. Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրականացնում է Վարկային Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը և վերստուգումը՝ ինչպես ըստ վերստուգող հանձնաժողովի հաստատած ժամանակացույցի, այնպես էլ Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի կամ 10 տոկոսից ավելի բաժնետոմս ունեցող բաժնետերերի պահանջով:

11.5. Վերստուգումը կատարվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, ընդհանուր ժողովի պահանջով կամ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) սեփական նախաձեռնությամբ: Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի Վարկային Կազմակերպության պաշտոնատար անձանցից պահանջելու իրեն ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները:

11.6. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի պահանջել Վարկային Կազմակերպության բաժնետերերի արտահերթ ժողովի հրավիրում, ինչպես նաև վերջինիս պահանջով նրան պետք է ներկայացվեն Վարկային

Կազմակերպության, դրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

11.7. Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողով ձևավորելու դեպքում այն կազմվում է առնվազն 3 անդամից, որոնք ընդհանուր ձայների թվի պարզ մեծամասնությամբ ընտրվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով: Վարկային Կազմակերպության խորհդի անդամները և գործադիր մարմինը չեն կարող միաժամանակ լինել վերստուգող հանձնաժողովի անդամներ: Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի անդամների կողմից:

11.8. Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովը հաշվետու է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են ընտրվել Վարկային Կամակերպության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած գործունակ ֆիզիկական անձինք:

11.9. Վարկային Կազմակերպության Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը)՝

ա. Վարկային Կազմակերպությունում հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ,

բ. Վարկային Կազմակերպության խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին Վարկային Կազմակերպության գործունեության համապատասխանության, ինչպես նաև ՀՀ ԿԲ հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին,

գ. եզրակացություններ է տալիս Վարկային Կազմակերպության խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,

դ. իրականացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաև Օրենքով վերապահված այլ լիազորություններ:

11.10. Վարկային Կազմակերպության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Վարկային Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ՝ համաձայն Օրենքով սահմանված բովանդակության:

11.11. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Վարկային Կազմակերպության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմում է եզրակացություն և վերջինս ներկայացնում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին: Վարկային Կազմակերպության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:

11.12. Սույն Կանոնադրության գրանցման պահին վերստուգող հանձնաժողով չի ձևավորվում և նրա լիազորություններն իրականացնում է վերստուգողը:

12. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1 Վարկային Կազմակերպությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական հաշվետություններ: Հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների ներկայացման սկզբունքները սահմանվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

12.2 Վարկային Կազմակերպությունը կազմում և ՀՀ ԿԲ է ներկայացնում տարեկան, եռամսյակային և այլ ֆինանսական հաշվետվություններ՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված ձևերով և պարբերականությամբ:

12.3 Հաշվապահական հաշվառումը Վարկային Կազմակերպությունում իրականացվում է ՀՀ ԿԲ և կառավարության լիազորած մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

12.4 Վարկային Կազմակերպությունը կազմում և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում մամուլում հրապարակում է տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգով:

12.5 Վարկային Կազմակերպության գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

12.6 Յուրաքանչյուր տարի Վարկային Կազմակերպությունը ստուգվում է անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Անկախ աուդիտորական կազմակերպությունն ընտրվում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից: Անկախ աուդիտորական կազմակերպության հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը: Խորհուրդը որոշում է անկախ աուդիտորական կազմակերպության ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

12.7 Վարկային Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Վարկային Կազմակերպության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն հինգ տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

12.8 Վարկային Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացվում է աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև անկախ աուդիտորական կազմակերպության հետ կնքված պայմանագրով նախատեսված մեխանիզմներով:

13. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ, ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13.1. Վարկային Կազմակերպությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում հիմնել իրավաբանական

անձի կարգավիճակ չունեցող առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

13.2. Հայաստանի Հանրապետության տարածքում Վարկային Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները ստեղծվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և գործում են ՀՀ ԿԲ կողմից հաշվառվելուց հետո: Օտարերկրյա պետությունների տարածքում Վարկային Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է այդ երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

13.3. Վարկային Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Վարկային Կազմակերպության խորհրդի կողմից: Առանձնացված ստորաբաժանումը հիմնադրված է համարվում համապատասխան որոշման ընդունման պահից:

13.4. Վարկային Կազմակերպությունը հաստատում է իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, որոնցում սահմանվում են նրանց լիազորությունները և լուծարման կարգը:

13.5. Վարկային Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, հաշվառումը և լուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամն սահմանված կարգով:

13.6. Վարկային Կազմակերպության մասնաճյուղը գործում է Վարկային Կազմակերպության կողմից տրված լիազորությունների սահմաններում, նրա անունից և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում (ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով), որոնք նախատեսվում են մասնաճյուղի կանոնադրությամբ:

13.7. Վարկային Կազմակերպությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում:

13.8. Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է այդ երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

13.9. Հայաստանի Հանրապետության տարածքում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

14.1. Վարկային Կազմակերպության լուծարումը հանգեցնում է վարկային կազմակերպության գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի՝ ուժը կորցրած

ճանաչելուն և Վարկային Կազմակերպության՝ որպես իրավաբանական անձի գոյության դադարման: Վարկային Կազմակերպությունը կարող է լուծարվել հետևյալ դեպքերում.

ա. ՀՀ օրենսդրության համաձայն նման որոշում կայացնելու իրավասություն ունեցող համապատասխան դատարանի կամ արբիտրի որոշմամբ,

բ. բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀՀ ԿԲ նախապես ստացված համաձայնությամբ,

գ. Վարկային Կազմակերպության անվճարունակության կամ սնանկության դեպքում՝ անվճարունակության (սնանկության) մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

դ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

14.2. Վարկային Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Վարկային Կազմակերպության լուծարումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նշանակված լուծարային հանձնաժողովի կողմից՝ ժողովում հաստատված լուծարային նախագծին համապատասխան:

14.3. Սույն Կանոնադրության 14.1 կետի ա. ենթակետով նախատեսված հիմքով լուծարվելու դեպքում լուծարումն իրականացվում է իրավասու դատարանի կամ արբիտրի կողմից նշանակված լուծարային հանձնաժողովի կողմից:

14.4. Լուծարային հանձնաժողովը պետք է կազմված լինի առնվազն երեք անդամից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն ԿԲ կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք:

14.5. Լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո՝ երեք օրվա ընթացում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է ԿԲ-ին Վարկային Կազմակերպության լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից:

14.6. Լուծարային հանձնաժողովը առնվազն ամիսը մեկ անգամ ՀՀ ԿԲ է ներկայացնում հաշվետվություն իր գործունեության վերաբերյալ և իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ լուծարային հանձնաժողովի վրա դրված այլ պարտավորություններ:

14.7. Վարկային Կազմակերպության լուծարման դեպքում նրա բոլոր դրամական միջոցները, ներառյալ Վարկային Կազմակերպության գույքի իրացումից ստացված հասույթը, ուղղվում է Վարկային Կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարմանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հերթականությամբ, իսկ մնացած մասով Օրենքով սահմանված հերթականությամբ բաշխվում է Վարկային Կազմակերպության բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող բաժնետոմսերի տեսակներին ու քանակին համամասնորեն:

14.8. Վարկային Կազմակերպությունը համարվում է լուծարված լուծարային հանձնաժողովի ԿԲ կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելուց հետո: Վարկային Կազմակերպության լուծարման մասին ՀՀ ԿԲ-ում վարվող վարկային կազմակերպությունների գրանցման մատյանում և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում համապատասխան գրանցում է կատարվում:

14.9. ՀՀ ԿԲ-ի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը Վարկային Կազմակերպության լուծարման վերաբերյալ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում: